

ԿԱՐԾԻՔ

**ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ՝
 «ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՆԹԱԼԵԶԿԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ
 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ
 ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԺԳ.00.02 «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ
 ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ» /ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ/ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ՀԱՄԱՐ**

Պաշտպանության ներկայացված խնդրո առարկա ատենախոսությունը վերաբերում է բժշկության ասպարեզում անգլերեն ենթալեզվի հաղորդակցական ուղղվածությունների խնդրին, որի կարևորությունը մեզանում գնալով աճում է երկրաչափական պրոգրեսին համապատասխան: Ուստի, այս թեմայի ընտրությունը, մեր կարծիքով, ամենևին էլ պատահական չէ:

Ներկայացված ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվել են 8 պարագրաֆների, եզրակացությունից /աշխատանքում թյուրիմացաբար գրված է հոգնակիով/, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Նշենք, որ ատենախոսի կողմից կատարված է ստույգ և նպատակահարմար բաժանումներ: Շարադրանքում օգտագործված է 120-ից ավելի ուսումնասիրություններ, այդ թվում հոդվածներ, որոնցից 45-ը անգլերենով են, որը նույնպես խիստ զովելի է:

Ներածականում ատենախոսը հիմնարար ներկայացրել է իր առջև դրված խնդիրները՝ սկսած տվյալ թեմայի արդիականությունից մինչև նրա նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, մեթոդական հիմքերը, տեսական և գործնական նշանակությունները, ձեռք բերված արդյունքների հավաստիությունը և այլն:

Հատկապես կարևորում ենք աշխատանքի փորձարարական հիմքը. քանզի այն 3-ից 4 տարիների /2015-2019թթ./ ընթացքում իրականացված ուսումնասիրությունների վերջնարդյունք է: Գիտական նորույթի հատվածում Քրիստինե Մեժլումյանը իրավացի ամփոփում է, որ իր կողմից «..հետազոտվել է անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման մեթոդական համակարգը: Ապա շարունակում, որ այս ընթացքում հաշվի է առնվել ժամանակակից անձակենտրոն փոխներգործուն՝ համակարգչային-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը» այդ դասընթացները կազմակերպելու ողջ ընթացքում:

Աշխատանքի 1-ին գլխում «Բժշկական բառապաշարի ուսուցման առանձնահատկություններն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում» վերատառությամբ հանգամանալից տրված են բառապաշարի ընտրության, դրանց ուսուցման խոսույթային հայեցակերպերը, այդ թվում՝ մեղմասությունների դասավանդման ուղիներն ու ճանապարհները:

2-րդ գլխում, որը վերնագրված է «Անգլերենի լեզվաոճական հնարների կիրառումը անգլերենի բժշկական ենթալեզվում», կրկնությունից և լեզվական անհարթությունից խուսափելու համար ավելի նպատակահարմար կլինե՞ր անվանել «Անգլերենի լեզվաոճական հնարների կիրառումը վերջինիս բժշկական ենթալեզվում»: Այս գլուխը վերաբերում է առայժմ մեթոդիկայում համարյա չհետազոտված խնդիրների ուսումնասիրությանը՝ բժշկական ծածկալեզվի ուսուցման առանձնահատկություններին՝ հայալեզու լսարաններում, ինչպես նաև բժշկական փոխաբերությունների մատուցման հիմնահարցերին: Երևի հենց սակավ ուսումնասիրության պատճառով է, որ նշված գլուխը ծավալային առումով զիջում է մյուս երկուսին: Գլխի ընդհանուր ծավալն է 15 էջ: Սա, իհարկե համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների համար ՀՀ-ի ԲՈԿ-ի կողմից առաջադրված պահանջներին: Համեմատության համար նշենք, որ 1-ին գլուխը բաղկացած է 46, իսկ 3-ը՝ 50 էջից: Մեր կարծիքով, հետագայում հենց այս գլուխն էլ

ատենախոսի կողմից պետք է դառնա գիտական նոր հետազոտությունների հիմնական առարկա կամ թիրախ: Այստեղ Քրիստինե Մեծլումյանի կողմից կատարված են բազմաթիվ սկզբունքային հարցադրումներ /օր./ բժշկական խոսույթը բացահայտող լեզվական և ոճային հնարները, այդ հնարների ուսուցողական ներուժը, ծածկալեզվի գործառական և բովանդակային կառույցները և այլն/: Սկզբունքային նշանակություն ունի ատենախոսի կողմից «բժշկական փոխաբերություն» հասկացության մեկնաբանումը: Վերջինս գիտականից զատ ունի նաև առօրեական նշանակություն, որը հույժ կարևոր է: Այս պատճառով էլ հեղինակի կողմից պատրաստվել է հատուկ ցանկ, որի իմացությունը ոչ համաչափ պայմաններում՝ ցանկալի է յուրաքանչյուրի համար:

3-րդ գլուխը՝ «Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը» ներկայացնում է իմացության մեթոդական համակարգի հիմքերը, որոնց անդաստանում այն առաջադրանքներն ու վարժություններն են, ինչի վրա էլ կառուցվում է ուսուցման վերնաշենքը: Այստեղ մոտեցումները կարող են լինել խիստ տարբեր – լեզվաբանականից մինչև հոգելեզվաբանական, լեզվաուսուցողական, կամ ինչպես նշված է աշխատանքում՝ լեզվադիդակտիկ: Կարևոր են բովանդակային առումով նաև գլխի 2-րդ և 3-րդ պարագրաֆները, որտեղ արծածված են ենթալեզվի ուսուցման վարժությունների համակարգը և վերջիններիս կիրառման մեթոդական ձևերը:

Աշխատանքի վերջաբանում կատարված են համապատասխան եզրահանգումներ, որը կարևորում է նրա տեղն ու դերը հետազոտվող գիտության շրջանակներում:

- Ատենախոսության կարևոր բաղկացուցիչներից են երեք հավելվածները՝
- ա/ հասկացույթի վրա հիմնված բժշկական անձանունների ցանկը և այդ ասպարեզում կիրառվող փոխաբերությունները,
 - բ/ բժշկական հապավումները,

գ/ բժշկական մեղմասությունների շարքը:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը, չենք կարող շրջանցել որոշ թերություններ, որոնք տեղ են գտել շարադրանքում.

1. Առաջին դիտողությունը վերաբերում է գրականության ցանկին, որտեղ տեղ չեն գտել վերջին 20 տարիներին հրատարակված գիտամեթոդական աշխատությունները: Հարկ ենք համարում նշել, որ սովորաբար բառարանները, ինչպես նաև էլեկտրոնային ռեսուրսները ներկայացվում են առանձին ցանկով: Ի դեպ՝ հեղինակը, էլեկտրոնային ռեսուրսները նշելիս, երբեմն մոռանում է տեղեկացնել վերջին անդրադարձի ամսաթիվը:
2. Հեղինակը չի ներկայացրել ինտերֆերենցիայի և տրանսպոզիցիայի շրջանակները, որը շատ կարևոր է մեթոդական համակարգի գրագետ մշակման համար:
3. Որոշ դեպքերում լեզվաբանական նյութի ներկայացման և վերլուծության ընթացքում ցանկալի կլիներ իրականացնել նաև համեմատական տիպաբանական վերլուծություն:
4. Ցանկալի կլիներ աշխատանքում տեսնել հետազոտվող նյութի SWOT-վերլուծությունը:

Վերոհիշյալ դիտողությունները ոչնչով չեն նսեմացնում գրախոսվող ախատանքի վերաբերյալ մեր ընդհանուր դրական կարծիքը:

Ամփոփելով, պետք է ընդգծենք, որ ընթերցողի սեղանին է դրված մի բավականին կարևոր հետազոտություն ևս, որտեղ իրար են զոդված անգլերենի բժշկական ենթալեզուն և դրա հաղորդակցական ռազմավարությունները: Աշխատանքը շարադրված է գրագետ հայերենով, կան միայն մանր և համարյա անտեսանելի ոճական անհարթություններ: Պետք է ընդգծել, որ սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ելնելով վերոհիշյալից, կարող ենք եզրակացնել, որ Քրիստինե Համլետի Մեծլույանի «Անգլերենի բժշկական ենթալեզվի ուսուցման հաղորդակցական ռազմավարությունները» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացված թեկնածուական ատենախոսություններին վերաբերող բոլոր պահանջներին, իսկ հեղինակը արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը **ԺԳ.00.02** - Դասավանդման և ուսուցման մեթոդիկա /անգլերեն լեզու/ մասնագիտությամբ:

**Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝**



Իննա Ռոբերտի Սարգսյան

**Հաստատում եմ՝
մ.գ.դ., պրոֆեսոր Իննա Ռ. Սարգսյանի ստորագրությունը.**

**«Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարան» հիմնադրամի
գիտական քարտուղար՝**



Հասմիկ Հովհաննեսի Փիլավջյան